Սիամանթո

Հայրը հեգեվարք

Վերջին նամակն ինձի տուէք, որ արցունքներս սրբե՛մ…:
Ա՛հ, ուրկե՞ց է որ կը բխիք, ո՞ր անդունդէն, ո՞ր աղբիւրէն…
Դո՛ւք, մարգարտի ու մարմարի յորդահոսան փշրանքնե՛ր,
Ա՛լ աչքերուս խեղճ կոպերն խոցոտեցան,
Ամբողջ կեա՛նքս, ամբողջ արե՛ւս, ամբողջ ուղե՛ղս այսօր լացի…
Վերջին նամակն ինձի տուէք… որ աչքերս ձեզմէ ծածկեմ…:
Մթնշաղի հաւախօսին ո՞վ արթուն էր ձեր մէջէն.
Ա՛հ, արշալոյսին բարութի՛ւնը, բարութի՛ւնն այս առաւօտ,
Սոխակները սիրահարի պէս՝ բոլորը մէկ կու լային,
Ու վանդակին կապոյտ կաքաւը ձիւնին կարօտը կ՚երգէր…:
Բայց ի՞նչու դեռ չի բերիք մեր պարտէզին վարդերէն,
Որդուս ձեռքովը տնկուած վարդատունկէն քանի մը վա՛րդ…
Ու թերթիկներն այդ շուշան ճակտիս վրան թափեցէ՛ք…
Գլխուս վրա՛ն, մազերո՛ւս մէջ, սրտիս վրան սրսկեցէ՛ք
Ա՛հ, կարծես թէ հրեշտակի փետուրներ են որ կը թափի՛ն…
Ի՛նչ սրբազան բուրմունք է այս, արքայութեան հոտը կ՚առնեմ.
Սրսկեցէ՛ք, սրսկեցէ՛ք, ա՛լ պատանքի պէտք չունիմ…:
Սրսկեցէ՛ք, ես իր հոգին ու հասակը յստակութեամբ կը տեսնեմ…
Ահաւասիկ առջեւս է, զիս չե՞ս ճանչնար, մօտեցի՛ր, իմ սիրեցեալ զաւա՛կս,

Ես քու հա՛յրդ եմ, բազուկներուս մէջը նետուէ՛, բերանդ ինձ մօտեցո՛ւր,
Քու ծարաւէդ ծերացեր եմ, ես քու հայրդ եմ մահաշերմէս դողդոջուն…

Ա՛հ, այդ վարդերէն սրսկեցէ՛ք, ի՞նչ երջանիկ երազ էր այս,
Շունչս որչափ կարճ է այսօր, բայց ո՞վ կրնայ մրրկին մէջը շնչել…
Կռունկները կոնչելով, ի՞նչպէս անցան հովերուն հետ,
Մեր երդիքին վրայէն ի՞նչպէս անցան, առանց խապրի՞կ մը բերելու,
Բայց ես գիտեմ, որ կարաւանն այս իրիկուն կը հասնի…
Երազիս մէջ ես տեսայ, իր մետաքսէ վարշամակը գլխուն էր,
Ձեր բոլորին համար ընծաներու երկու բեռներ,
Ու կարմիր ձին հանդարտութեամբ սպիտակին կը հետեւէր…:
Ա՛հ, սա՛ պատուհանը բացէ՛ք, սա՛ փեղկերը ե՛տ շրջեցէք,
Լուսաղբիւրի ճանապարհէն ահաւասիկ կարաւանը կ՝երկարի…
Զորիներուն բոժոժին ձայնը կ՝իմանամ… սա՛ փեղկերը նորէն բացէ՛ք…
Ինչո՞ւ կու լաք, շունչս սկսաւ սպառիլ: Մրրի՛կ կայ, մրրի՛կ…
Բոլոր ծառերն սկսան, կմախքի պէս, մէկզմէկու դէմ փշրուի՛լ…
Ոտքի ելէ՛ք բոլորդ մէկ, ոտքի ելէ՛ք, դիմաւորել չէ՞ք երթար…
Կարաւանը մօտեցեր է: Ինչո՞ւ անշարժ նստեր էք,
«Օգնութի՛ւն մեզ, օգնութի՛ւն մեզ, օգնութի՛ւն մեզ» կ՝աղաղակեն…
Եթէ դիակս ալ ըլլայ, չորսերնիդ մէկ, ձեր ուսերուն վրան առած,
Եթե դիակս ալ ըլլայ, պէտք է որդիս, այս իրիկուն, աչքերս բա՛ց դիմաւորեմ…